

«Գրանցված է»  
ՀՀ արդարադատության  
նախարարության կողմից  
16 հունիսի 2008 թ.  
Պետական գրանցման թիվ 12408190

**Հայաստանի Հանրապետության  
կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետ**

6 հունիսի 2008 թ.

ք. Երևան N 07-Ն

**Հրաման**

**Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի աշխատակարգը, հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովին ներկայացվող դիմում-գանգատի ձեվը եվ դիմում-գանգատ ներկայացրած անձին նիստի անցկացման վայրի եվ ժամանակի մասին ուղարկվող ծանուցագրի ձեվը սահմանելու մասին**

Հիմք ընդունելով «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43.1-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թ. նոյեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 1926-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 29-րդ կետի «գ» ենթակետը՝

**Հրամայում եմ՝**

Սահմանել.

1. Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովին ներկայացվող դիմում-գանգատի ձևը և դիմում-գանգատ ներկայացրած անձին նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին ուղարկվող ծանուցագրի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

Վ. Բարսեղյան

## Աշխատակարգ

### Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի

#### 1. Ընդհանուր դրույթներ

1. Սույն աշխատակարգը կանոնակարգում է հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի (այսուհետ՝ Գանգատարկման հանձնաժողով) գործունեությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված՝ Գանգատարկման հանձնաժողովի իրավասությանը վերաբերող բողոքների, դիմումների ու դիմում-գանգատների (այսուհետ՝ դիմում-գանգատ) քննարկումն ապահովելու համար:

2. Գանգատարկման հանձնաժողովը հարկային մարմնի ղեկավարի կողմից ձևավորվող, վերադաս հարկային մարմնում մշտապես գործող մարմին է, որը գործում է հարկային մարմնի կամ հարկային ծառայողի գործողությունների, անգործության, ինչպես նաև հարկային վեճերի լուծման նպատակով:

3. Գանգատարկման հանձնաժողովը բաղկացած է Գանգատարկման հանձնաժողովի նախագահից և Գանգատարկման հանձնաժողովի ութ անդամից, որոնք իրենց աշխատանքը Գանգատարկման հանձնաժողովում համատեղում են իրենց զբաղեցրած հարկային ծառայության պաշտոնների հետ:

4. Իր գործունեության ընթացքում Գանգատարկման հանձնաժողովը ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով, «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ իրավական ակտերով, տվյալ ոլորտին վերաբերող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և սույն աշխատակարգով:

5. Հարկային տեսչության պաշտոնատար անձանց այն գործողությունների գանգատարկումը, որոնք կապված են վարչական տուգանքի նշանակման հետ, կատարվում է վարչական իրավախախտումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

#### 2. Գանգատարկման հանձնաժողովի խնդիրներն ու գործառույթները

6. Գանգատարկման հանձնաժողովի հիմնական խնդիրը հարկային մարմնի (ստորաբաժանման) կամ հարկային ծառայողի գործողությունների (անգործության), այդ թվում՝ օրենքով սահմանված կարգով ստուգում իրականացնող անձանց գործողությունների և վարչական ակտերի վերաբերյալ հարկ վճարողների կողմից ներկայացված դիմում-գանգատների քննարկման, ինչպես նաև օրենքի միատեսակ և ճիշտ կիրառման ապահովումն է:

7. Գանգատարկման հանձնաժողովի հիմնական գործառույթը սույն կարգի 6-րդ կետով նշված գանգատների քննարկումն ու դրա արդյունքում որոշման կայացումն է, ինչպես նաև հարկային վարչարարության կատարելագործման համար միջնորդությունների և օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը:

#### 3. Գանգատարկման հանձնաժողովի կազմը

8. Գանգատարկման հանձնաժողովն ունի նախագահ և անդամներ: Գանգատարկման հանձնաժողովն ունի քարտուղար, որը չի հանդիսանում Գանգատարկման հանձնաժողովի անդամ:

9. Գանգատարկման հանձնաժողովի նախագահը՝

1) ղեկավարում է Գանգատարկման հանձնաժողովի գործունեությունը:

- 2) կազմակերպում է Գանգատարկման հանձնաժողովի ընթացիկ աշխատանքները.
- 3) նախապատրաստում է Գանգատարկման հանձնաժողովի նիստի օրակարգը և կազմակերպում է նիստերի անցկացումը.
- 4) հրավիրում է Գանգատարկման հանձնաժողովի նիստերը և վարում է դրանք.
- 5) կազմակերպում է Գանգատարկման հանձնաժողովի աշխատանքները, պատասխանատվություն է կրում Գանգատարկման հանձնաժողովի խնդիրների ու գործառույթների ժամանակին և սույն կարգին համապատասխան իրականացման համար:  
Գանգատարկման հանձնաժողովի նախագահի բացակայության պարագայում, նրա հանձնարարությամբ Գանգատարկման հանձնաժողովի նախագահի լիազորություններն իրականացնում է Գանգատարկման հանձնաժողովի անդամներից մեկը:

#### 10. Գանգատարկման հանձնաժողովի քարտուղարը՝

- 1) ընդունում է ստացված դիմում-զանգատները, ստուգում է դրանց կազմությունը և դրանց մասին զեկուցում է Գանգատարկման հանձնաժողովի նախագահին.
- 2) կատարում է Գանգատարկման հանձնաժողովի նախագահի հանձնարարությունները դիմում-զանգատների վերաբերյալ հարկային մարմնի տիրապետման տակ գտնվող բոլոր փաստաթղթերի հավաքման, դրանք Գանգատարկման հանձնաժողովի անդամներին ծանոթացման ներկայացնելու, Գանգատարկման հանձնաժողովի աշխատանքի ընթացքի արձանագրման և արձանագրության կազմման, նիստերի մասնակիցների հրավիրման, ծանուցագրերի ուղղարկման և այլնի հետ կապված:
11. Գանգատարկման հանձնաժողովի անհատական կազմը հաստատում է հարկային մարմնի ղեկավարը:

### 4. Գանգատարկման հանձնաժողովի անդամների անկախությունը

12. Գանգատների քննարկման ընթացքում Գանգատարկման հանձնաժողովի անդամներն անկախ են և առաջնորդվում են սույն աշխատակարգի 4-րդ կետով:
13. Գանգատարկման հանձնաժողովի որոշումներն ընդունելիս Գանգատարկման հանձնաժողովի անդամներն առաջնորդվում են միայն օրենքով և այլ իրավական ակտերով և չեն կարող ենթարկվել որևէ ազդեցության:

### 5. Դիմում-զանգատների քննարկման եվ լուծման կարգը

14. Քննարկման ընդունված դիմում-զանգատները քննարկվում են կոլեգիալ կարգով՝ Գանգատարկման հանձնաժողովի ամբողջ կազմով:
15. Գանգատարկման հանձնաժողովի քարտուղարը դիմում-զանգատները քննարկման ղնելուց առաջ հավաքում է հարկային մարմնի տիրապետման տակ գտնվող բոլոր փաստաթղթերը և Գանգատարկման հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ դրանք ներկայացնում Գանգատարկման հանձնաժողովի անդամներին ծանոթացման:
16. Գանգատարկման հանձնաժողովի նիստերը հրավիրվում են նախագահի կողմից յուրաքանչյուր շաբաթվա ուրբաթ օրը, իսկ եթե այն ոչ աշխատանքային օր է, ապա դրան հաջորդող աշխատանքային օրը:
17. Գանգատարկման հանձնաժողովի որոշումներն իրավագոր են, եթե այդ որոշումների կայացմանը մասնակցել է առնվազն 7 հոգի: Որոշումները կայացվում են բաց քվեարկությամբ, պարզ մեծամասնության ձևով:
18. Գանգատարկման հանձնաժողովի նախագահը քվեարկում է վերջում և հավասար ձայներ լինելու պարագայում վերջինիս ձայնը որոշիչ է: Հավասար ձայներ լինելու պարագայում որոշումը համարվում է ընդունված դիմում-զանգատ ներկայացնող անձի օգտին:
19. Գանգատարկման հանձնաժողովին դիմում-զանգատ ներկայացրած անձը համապատասխան նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին նախապես ծանուցվում է: Գանգատարկման հանձնաժողովի նիստին կարող է մասնակցել դիմում-զանգատ ներկայացրած անձը, վերջինիս գլխավոր հաշվապահը և (կամ) դիմում-զանգատ ներկայացրած անձի լիազորած անձը (մասնագետը):
20. Գանգատարկման հանձնաժողովի նիստերը դռնբաց են: Դրանց կարող է մասնակցել ցանկացած անձ, այդ թվում՝ զանգվածային լրատվության ներկայացուցիչները: Գանգատարկման հանձնաժողովի նիստերը կարող են լինել դռնփակ՝ դիմում-զանգատ ներկայացրած անձի գրավոր միջնորդության հիման վրա Գանգատարկման հանձնաժողովի նախագահի կայացրած որոշմամբ առևտրային կամ այլ (այդ թվում՝ հարկային) գաղտնիք պահպանելու անհրաժեշտության դեպքում:

21. Գանգատարկման հանձնաժողովի նիստի ավարտից հետո եռօրյա ժամկետում, Գանգատարկման հանձնաժողովը դիմում-գանգատ ներկայացնողին ուղարկում է դիմում-գանգատի վերաբերյալ հանձնաժողովի կայացրած որոշումը:

22. Գանգատ բերելու հիմքերի և կարգի, ինչպես նաև դիմում-գանգատի քննարկման և լուծման հարցերում Գանգատարկման հանձնաժողովն ուղղորդվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով:

## **6. Գանգատարկման հանձնաժողովի իրավունքները եվ պարտականությունները**

23. Գանգատների քննարկման արդյունքում Գանգատարկման հանձնաժողովն իրավասու է ընդունելու «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածով սահմանված որոշումները:

24. Գանգատարկման հանձնաժողովը, դիմում-գանգատների քննարկման արդյունքում, իրավասու է միջնորդություն ներկայացնելու հարկային մարմնի ղեկավարին՝

1) վերստուգման գործընթաց սկսելու համար.

2) հարկային ծառայողների նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու համար:

25. Գանգատարկման հանձնաժողովն իրավասու է օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկություններ ներկայացնելու հարկային մարմնի ղեկավարին:

26. Գանգատարկման հանձնաժողովն ունի օրենքով սահմանված այլ իրավունքներ և պարտականություններ:

27. Գանգատների վերաբերյալ Գանգատարկման հանձնաժողովի որոշումները ենթակա են կատարման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

28. Գանգատարկման հանձնաժողովի որոշումները օրենքով սահմանված կարգով և ժամկետներում կարող են բողոքարկվել դատարան:

29. Անհրաժեշտության դեպքում, Գանգատարկման հանձնաժողովն իր նիստերին կարող է հրավիրել գանգատարկվող գործողություն կատարած, անգործություն դրսևորած կամ որոշում կայացրած հարկային ծառայողների:

30. Գանգատարկման հանձնաժողովի նախագահը կարող է հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումներից պահանջել և ստանալ մասնագիտական եզրակացություն դիմում-գանգատի քննարկման համար նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ, այդ թվում՝ դատական նախադեպի (ՀՀ վճռաբեկ դատարանի համապատասխան որոշում) առկայության կամ բացակայության մասին:

Հավելված N 2  
ՀՀ կառավարությանն առընթեր  
հարկային պետական ծառայության պետի  
2008 թ. հունիսի 6-ի N 07-Ն հրամանի

ՁեՎ

**ԳԱՆԳԱՏԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴԻՄՈՒՄ-ԳԱՆԳԱՏԻ**

**ՀՀ ԿԱ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ  
ԳԱՆԳԱՏԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

---

(այն վարչական մարմնի անվանումը, որին ներկայացվում է դիմում-գանգատը)

---

---

---

(դիմում-գանգատ բերող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, նրա հասցեն, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը, նրա անունից դիմում-գանգատ բերող անձի անունը, ազգանունը և պաշտոնը)

**ԴԻՄՈՒՄ-ԳԱՆԳԱՏ**

---

---

---

(գանգատարկման առարկան)

---

(դիմում-գանգատ բերողի պահանջը)

---

(դիմում-գանգատին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը)

---

(դիմում-գանգատ կազմելու տարին, ամիսը և ամսաթիվը)

---

(դիմում-գանգատ բերող անձի ստորագրությունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա անունից դիմում-գանգատ բերող անձի ստորագրությունը և իրավաբանական անձի կնիքը)

**Ձ Ե Վ**

**ԳԱՆԳԱՏ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԻՆ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ  
ՎԱՅՐԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ ՈՒՂԱՐԿՎՈՂ ԾԱՆՈՒՑԱԳՐԻ**

**ՀՀ ԿԱ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ  
ԳԱՆԳԱՏԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ք. Երևան \_\_\_\_\_ 20\_\_ թ.

(դիմում-գանգատ բերող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, նրա հասցեն, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը, նրա անունից դիմում-գանգատ բերող անձի անունը, ազգանունը և պաշտոնը)

**ԾԱՆՈՒՑԱԳԻՐ**

(գանգատարկման առարկան)

(դիմում-գանգատ բերողի պահանջը)

(Գանգատարկման հանձնաժողովի նիստի անցկացման վայրը և ժամանակը)

ՆԱԽԱԳԱՀ

(ստորագրությունը)